



ՀՀ ԿԳՆ «ԵՐԵՎԱՆԻ «ՄԵԽԻԹԱՐ ՍԵՐԱՍՏԱՅԻ» ԿՐԹԱԳԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ

«MKHITAR SEBASTATSI» EDUCATIONAL COMPLEX

MINISTRY OF SCIENCE AND EDUCATION OF THE REPUBLIC OF ARMENIA

0064, Երևան, Բաժնի ու 57 հեռ: (374 10) 74 72 46. (374 91) 43 10 99 info@mskh.am www.mskh.am  
Raffy 57.Yerevan, tel:(374 10)74 72 46.(374 91)43 10 99 https://www.facebook.com/mxitar.sebastaci?fref=ls

18-01-001

08.01.2018թ.

«ԿԳ ՆԱԽԱՐԱՐ

ՊԱՐՈՆ Լ. ՄԿՐՏՉԱՆԻՆ

Հարգելի նախարար.

Ներկայացնում ենք պետական աջակցության թ. Ա-9.6.1/18 պայմանագրով նախատեսված՝ «Փորձարարական մանկավարժության ծրագրերի իրականացում հանրակրթությունում» ծրագրի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների հաշվետվությունը: Հաշվետվության հիմքերը՝ մանկավարժության կենտրոնի ենթակայքում:



ՀԱՐՁԱՆՔՈՎ՝

ԿՐԹԱԳԱՄԱԼԻՐԻ ՏՆՕՐԵՆ՝

Ս. Մարկոսյան

Հեռախոս՝ 74 72 46

Ա. ԱԼՏՅԱՆ

info@mskh.am

86-28

Ստեղծողի մոբիլ դպրոց

Ստեղծագործ անհատի կրթական պատվեր, անհատի օժտվածության զարգացման հանրակրթական բաց համակարգ

Հեղինակային կրթական ծրագիրը՝ ուսումնական օրացույցով, ուսումնական նախագծերով, անհատական թվային միջոցներով

2017թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների ցուցանիշներ

<p>Հեղինակային կրթական ծրագրերի լրամշակման, իրականացման, տարածման, մանկավարժական աշխատողների և սովորողների կարողությունների զարգացման բաց համակարգ</p>	<p>Ուսուցման կազմակերպում 2017-2018 ուսումնական տարվա, դրա հավելվածների՝ հոկտեմբերի, նոյեմբերի, դեկտեմբերի օրացույցներով, մանկավարժական աշխատողների, 1-12-րդ դասարանում, քոլեջում սովորողների անհատական պլաններով:</p> <p>Նախագծային ուսուցման ստուգատես նոյեմբերի 13-17-ին՝ շուրջտարյա, մեկշաբաթյա, նոյեմբերին մեկնարկող ուսումնական նախագծերով:</p> <p>Հոկտեմբեր-դեկտեմբերին 200-ից ավելի ուսումնական նախագծեր, այդ թվում՝ կրթական փոխանակումների, «Հայ-վրացական հանրակրթական կամուրջների», «Բարեկամություն», «Կրթական պարտեզ», «Գեղարվեստը կրթահամալիրում», «Դպրոցը ամանորի բաց արվեստանոց. Ազդեցություններ, լույսեր, գույներ, ծայներ, մեղեդիներ», «Հոգևոր Հայաստան» «Ուսումնական Գյուրմրի», «Աշտարակը բաց արվեստանոց», «Գետը համայնքում», «Բռնադատվածներ», «Պատմության վերականգնում», «Հակաբացիլ Կոմիտաս, հակաբացիլ տոնախմբություն» նախագծերի շրջանակում:</p> <p>Հոկտեմբերի 30-նոյեմբերի 3-ը «Ուսումնական աշուն» նախագծային ճամբարներ կրթահամալիրում՝ դպրոց-պարտեզ դիմող 1-5-րդ դասարանցիների, միջին դպրոցի, ավագ դպրոցի մուտքի ճամբարներ:</p> <p>1300-ից ավելի ուսումնական բլոգների գործունեություն, բլոգային ուսուցման նախագծեր: Մեդիագրադարանում 53 ուսումնական նյութ, այդ թվում՝ կրթահամալիրում թվայնացված գիրք, ստեղծված թարգմանություն, տեսանյութ, հեռավար ուսուցման փաթեթ:</p> <p>Հեռավար-առցանց ուսուցման բաց նախագծեր՝ որպես լրացուցիչ կրթություն: Հեռավար ուսուցման կազմակերպում 14 սովորողի համար: Ֆլեշմոբների</p>
--	---

նախագծերում հանրակրթական այլ հաստատությունների սովորողների ներառում: Ինքնակրթության ուսումնական նախագծեր:

Սովորողների, դասավանդողների ՏՀՏ հմտությունների անընդհատ զարգացում կրթահամալիրի ՏՏ, կինո-ֆոտոյի մասնագետների անհատական մենթորական լաբորատորիաներում, դասավանդողների շուրջտարյա դպրոցում: «Իմացումի հրճվանք» ծրագրի, մայրենիի, օտար լեզուների ուսուցման, հասարակագիտական լաբորատորիաների գործունեություն:

Հեղինակային կրթական ծրագրի և կազմակերպման տեսադասեր (6):

Սովորողների տարատարիքի խմբերի երևանյան 48 ճամփորդություն, հայրենագիտական մեկօրյա՝ 46, և բազմօրյա-արշավախմբային 16 ճամփորդություն:

Ուսումնական կենտրոններում սովորողների նախասիրությունների զարգացման նախագծեր, լրացուցիչ կրթության ծրագրեր: Դրանցում հանրակրթական այլ հաստատությունների սովորողների ներգրավում:

Մանկավարժական «Դպիր» ամսագրի 3 հայերեն համար, անգլերեն, ռուսերեն, վրացերեն էջերում՝ նյութերի համալրում (55 էջ):

Մանկավարժական աշխատողների շուրջտարյա դպրոցի 69 պարապմունք, մանկավարժական աշխատողների աշնանային բաց ճամբար:

Նախագծային ուսուցման, վերապատրաստման մոդուլների մշակում, իրականացում կրթահամալիրում և կրթահամալիրից դուրս: Կրթահամալիրի դիմող մասնագետների քառօրյա վերապատրաստման դասընթացներ (4 խումբ):

Հանրակրթական դպրոցների ուսուցիչների, ղեկավար աշխատողների վերապատրաստում կրթահամալիրում (1 խումբ/26 մասնագետ):

Մանկավարժական ակումբի երեք բաց պարապմունք:

Ուսումնական նախագծերի իրականացման մեջ օտար լեզուների կիրառում՝ աշխատողի ինքնակրթության, օտար լեզուների դասընթացների միջոցով: Հրանտ Դինքի միջազգային հիմնադրամի հետ համագործակցության ծրագրով այս օրերին թուրք արվեստագետ Դուրու Օրսի հետ ուսումնական նախագծեր կրթահամալիրում:

	<p>«Հարթակ Գեղարվեստում» շուրջտարյա մանկավարժական ակումբի գործունեություն:</p>
<p>Մանկավարժական նորարարության փոխանակման հեռավար-առկա դպրոց Անհատի օժտվածության զարգացման բաց համակարգ</p>	<p>Մայրենիի, մաթեմատիկայի, օտար լեզուների (անգլերեն, ռուսերեն- վրացերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն), բնագիտության, պատմության, շախմատի ամենամյա ֆլեշմոբների առաջադրանքների ստեղծում (20 ֆլեշմոբ):</p> <p>4-րդ «Վահան Ասատրյան» մարզական ստուգատես՝ Երևանի, Կոտայքի, Գեղարքունիքի մարզի սովորող մարզիկների մասնակցությամբ:</p> <p>Պատանեկան ազգագրական բաց ճամբար՝ Բուլղարիայի, Վրաստանի (Սամցխե-Ջավախքի), Գյումրիի, Երևանի խմբերի մասնակցությամբ, հնագետ, ազգագրագետ մասնագետների- գիտաշխատողների ներգրավմամբ:</p> <p>«Բարեկամություն» արտագնա ճամբարներ</p> <p>Տավուշի մարզի Մովսեսում, Սյունիքի մարզի Սիսիանում, Արցախի Շուշիի տեխնոլոգիական համալսարանում: Վրաստանում մասնակցություն «Պատանի հնագետ» ուսումնական նախագծին:</p> <p>Հեղինակային կրթական ծրագրի ներկայացում Թբիլիսիում, Թբիլիսիի Գրչանիի մանկարպարտեզների աշխատողների վերապատրաստում վրացական կողմի հրավերով:</p> <p>«Հայ-վրացական հանրակրթական կամուրջներ» նախագծի ներկայացում, համերգ-տոնախմբություն Գյումրիում: Վրաստանի ուսուցիչների, այդ թվում՝ տարվա ուսուցչի այցելություն կրթահամալիր:</p> <p>«Ուսումնական Գյումրի», «Աշտարակը բաց լաբորատորիա» նախագծերի մեկնարկ:</p> <p>Հոգևոր, ժողովրդական երգերի տարածում ուսուցչական, պատանեկան, մանկական երգչախմբերի, գործիքային խմբերի, անհատ կատարումների միջոցով (15 համերգ կրթահամալիրում, «Գեղարվեստը կրթահամալիրում» բաց նախագիծը Աշտարակում՝ Աշտարակի դպրոցների խմբերի ներգրավմամբ, այդ թվում՝ երգի-պարի, պարերգի ուսուցում Աշտարակում, տեխնոլոգիական, կինո-ֆոտո համատեղ պարապմունքներ-պլեններներ, ամփոփում-ցուցադրություն-կլոր սեղան Աշտարակի հայրորդյաց տանը, համերգ-ներկայացում, հակաբացիլ տոնախմբություն՝ Աշտարակի, շրջանի գյուղերի դպրոցների մասնակցությամբ:</p>

	<p>Ուսումնական mskh.am կայքի 1405 էջ, 6 դպրոցների, քոլեջի, գրադարանի, մանկավարժության կենտրոնի, IT լաբորատորիայի ենթակայքերի գործունեություն: «Սեբաստացի» TV-ում 3462 նյութ, այդ թվում՝ ռեպորտաժ, հաղորդում, տեսանյութ, ֆոտոպատում, թեմատիկ ֆոտոշարք, «Սեբաստացի» ռադիոյի ամենօրյա գործունեություն՝ դպրոցական-դասարանական-խմբային 14 խմբագրություններով, 2017-2018-ի պատանեկան ամսագրերի (19) գործունեություն:</p> <p>Ամենշաբաթյա 12 մեդիաուրբաթ-համերգ-ներկայացում:</p> <p>Հեղինակային կրթական ծրագրերի մշակման-կազմակերպման-տարածման համար համագործակցություն պետական և ոչ հասարակական, միջազգային կազմակերպությունների, անհատ գործիչների հետ:</p>
<p>Աջակցություն կրթահամալիրում լրացուցիչ կրթության ծրագրերի իրականացմանը: Աջակցություն կրթահամալիրի կրտսեր դպրոցների և քոլեջի կազմում գործող նախակրթարանների պահպանությանը, ծրագրի ընդարձակմանը, տարածմանը</p>	<p>Կրթահամալիրի շախմատի դպրոցի սաների մասնակցություն որակավորման աշնանային մրցաշարերի (4-րդ, 3-րդ, 2-րդ, 1-ին կարգերի), միջդպրոցական մրցույթների կազմակերպում Երևանում, Աշտարակում: Կրթահամալիրի սովորողի մասնակցություն Մոսկվայում լեզվաբանական միջազգային օլիմպիադայի:</p> <p>Երաժշտության լրացուցիչ կրթության ընդլայնում, դաշնամուրի, ջութակի, ֆլեյտայի, վոկալի հետ ազգային նվագարանների ուսուցում, ազգային նվագարանների համույթ, գործիքային խմբերի ձևավորում: Պատանեկան երկսեռ նոր երգչախմբի ձևավորում: «Սեբաստացիներ» մանկական, պատանեկան, ուսուցչական երգչախմբերի գործունեություն: Մարզադպրոցում լողի, մարզական խաղերի, ծիավարության, նետաձգության, սուսերամարտի, հնգամարտի, հեծանվի լրացուցիչ կրթության խմբեր: Մասնակցություն վազքի-հեծանվավարության քաղաքային-հանրապետական մարզական միջոցառումներին, նետաձգության, սուսերամարտի միջազգային մրցումների վրաստանում:</p> <p>Գրական ակումբի կրթահամալիրային ամենշաբաթյա 12 հավաք:</p> <p>Երկարացված օրվա ծրագրի կազմակերպում որպես տարատարիք ճամբար՝ 21 ջոկատի գործունեություն, 432 սովորող:</p> <p>Հանրապետական, վրաստանյան ՁԼՄ-ներում 20 հրապարակում կրթահամալիրի մասին,</p>

	<p>կրթահամալիրի տնօրենի, դասավանդողի ելույթ, հարցազրույց, նրա մասնակցությամբ հաղորդում:</p> <p>Կրթահամալիրի 5 նախակրթարաններում 2-5 տարեկանների 10 խմբերի (212 սան) գործունեություն: Դաստիարակների 25 բլոգ, ամենշաբաթյա ուսումնական նախագծեր:</p> <p>«Իմացումի հրճվանք» ծրագրի կրտսերների ամենամսյա 3 ստուգատես:</p> <p>Դաստիարակների լաբորատորիայի գործունեություն՝ շաբաթական երկու պարապմունքով:</p> <p>Հանրապետության նախադպրոցական հաստատությունների ղեկավար և մանկավարժական աշխատողների հնգօրյա վերապատրաստման 3 փուլ (142 մարդ): Վերապատրաստման կազմակերպում գործող նախադպրոցական խմբերում, ուսումնական նախագծերում վերապատրաստվողների ներառմամբ: Վրաստանի նախադպրոցական հաստատությունների աշխատողների վերապատրաստում Թբիլիսիում՝ Գլխանիում, և Երևանում (եռօրյա վերապատրաստման մեկ խումբ):</p>
--	--